ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛ.
МУНИЦИПАЛИТЕТ с. АЙГЕШАТ

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ, գ. Այգեշատ հեռ.
(0237) 6 – 90 – 34, (0237) 71 – 7 - 51

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирская обл. С.Айгешат
Тел. (0237) 6 – 90 – 34, (0237) 71 – 7 - 51

«08» 11 2011թ. N 100

Արմավիրի մարզպետ

պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 1 – ին կայացած թիվ 8 նիստի որոշումները: Առդիր 11 թերթ:

Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10612-11
«08» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

1. նոյեմբերի 2011թ. N 8 նիստի N 25որոշում

ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 4 – րդ մասով.

Ավագանին որոշում է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 1 թիվ 8 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ. Մխիթարյան
Հ. Համբարձումյան
Գ. Ղազարյան
Վ. Հունանյան
Հ. Ղահրամանյան
Գ. Գրիգորյան

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2011 թվական նոյեմբերի 1
գ. Այգեշատ (Արմ.)

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեշատի գյուղական
համայնքի ավագանու
2011թվականի նոյեմբերի «1» ի
թիվ 8 նիստի թիվ 25 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու թիվ 8 նիստի օրակարգը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքում 2012 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 9 – ի N 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

1. նոյեմբերի 2011թ. N 26 – Ն որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1 – ին մասի 18 – րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9 – րդ, 10 – րդ, 11 – րդ հոդվածներով.

Ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքում 2012 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10 -րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ. Մխիթարյան _____
Հ. Համբարձումյան _____
Գ. Ղազարյան _____
Հ. Ղահրամանյան _____
Վ. Հունանյան _____
Գ. Գրիգորյան _____

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ **Ա. Մխիթարյան**
2011 թվական նոյեմբերի 1.
գ. Այգեշատ (Արմ.)

Հաստատված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1

ԹԻՎ 26 – Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏ (ԱՐՄ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ.
2)սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա) 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,
բ) 501 – ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ,
գ) 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.
4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ (Արմ) համայնքի (այսուհետև համայնք) վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների համար:

1) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ.
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 – րդ հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 – րդ հոդվածի 1 – ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ:
2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է.

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
2) թունդ ալկոհոլային արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություններն իրականացնելու թույլատվության համար տեղական տուրք 5000 դրամ:

Համայնքում մրցույթների և աճուրդների կամակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար 5000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

1. նոյեմբերի 2011թ. N 27 – Ն որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի առաջին մասի 19 – րդ կետով.

Ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիրի) գյուղական համայնքի կողմից 2012 թվականի մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10 - րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ. Մխիթարյան _____
Հ. Համբարձումյան _____
Գ. Ղազարյան _____
Հ. Ղահրամանյան _____
Վ. Հունանյան _____
Գ. Գրիգորյան _____

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2011թվական նոյեմբերի 1.
գ. Այգեշատ (Արմ.)

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արգեշատի գյուղական
համայնքի ավագանու
2011թվական նոյեմբերի 1.
թիվ 27 - Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Մանկապարտեզի վճար՝

1) 1 երեխայի համար - 3000 (երեք հազար) դրամ

2) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար – 1500 (մեկ հազար հինգ հարյուր)դրամ

3) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար – 0 դրամ

2. Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակների վավերացման համար գանձվող վճար – 5000 (հինգ հազար) դրամ

3. Աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ ստանալու լիազորագրեր տրամադրելու համար – 1000 դրամ

4. Համայնքի ազգաբնակչությանը խմելու ջուր մատակարարելու համար.

1) յուրաքանչյուր բնակելի տան հաշվով ամսեկան - 500 (հինգ հարյուր) դրամ

2) զոհված ազատամարտիկների ընտանիքներին – 0 դրամ

5. Համայնքում աղբահանության կազմակերպման համար վճար.

1) յուրաքանչյուր բնակչի հաշվով ամսեկան - 50 (հիսուն) դրամ

2) զոհված ազատամարտիկների ընտանիքներին – 0 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

1. նոյեմբերի 2011թ. N 28 որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի առաջին մասի 26 – րդ կետով .

Ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային եթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ. Մխիթարյան _____
Հ. Համբարձումյան _____
Գ. Ղազարյան _____
Հ. Ղահրամանյան _____
Վ. Հունանյան _____
Գ. Գրիգորյան _____

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2011թվական նոյեմբերի 1.
գ. Այգեշատ (Արմ.)

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեշատ գյուղական
համայնքի ավագանու
2011 թվականի նոյեմբերի 1-ի
թիվ 28 որոշման

2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՌԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	160000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	118000
3	Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	116000
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	114000
2	Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	2	85000
3	Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1 – ին կարգի մասնագետ	1	83000
4	Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2 – րդ կարգի մասնագետ	1	81000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
1	Պահակ	1	53000
2	Հավաքարար	1	35000
3	Վարորդ	1	45000
4	Փականագործ	1	35000
ԸՆԴՀԱՄԵՆԸ		12	1010000

2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը (դրամ)
1	Այգեշատ համայնքի մշակույթի տան տնօրեն	1	40000
2	Մշակույթի տան դռնապահ	1	35000
3	Մշակույթի տան հավաքարար	1	35000
4	Այգեշատ համայնքի գրադարանի վարիչ	1	40000
	ԸՆԴՀԱՄԵՆԸ	4	150000

2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

N	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը (դրամ)
1	Այգեշատ համայնքի մանկապարտեզի տնօրեն	1	80000
2	Մանկապարտեզի դաստիարակ	2	65000
3	Մանկապարտեզի դաստիարակի օգնական	1	45000
4	Մանկապարտեզի խոհարար	1	45000
5	Մանկապարտեզի հավաքարար	1	45000
6	Մանկապարտեզի հաշվապահ	1	35000
	ԸՆԴՀԱՄԵՆԸ	7	380000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

01. նոյեմբերի 2011թ N 29 - Ն որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄ.) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 – Ի N 36 –Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի առաջին մասի 3 – րդ կետով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 – րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և 3-րդ մասով.

Ավագանին որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի 2010 թվականի դեկտեմբերի 9 – ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմ.) գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 36 – Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:
   1)Բյուջեի եկամտային մասում՝ «Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ» տողը պակասեցնել 600.0 (վեց հարյուր հազար) դրամով, որտեղ 1200.0 (մեկ միլլիոն երկու հարյուր հազար) դրամից 600.0 (վեց հարյուր հազար) դրամը նախատեսված է եղել մանկապարտեզ հաճախող երեխաների ծնող-գումար, իսկ 2011 թվականին մանկապարտեզը կապիտալ վերանորոգման պատճառով չի գործել:
   2) Բյուջեի ծախսային մասում՝բաժին 09 խումբ 1 դաս 1 4511 հոդվածը պակասեցնել 1900,0 (մեկ միլլիոն ինը հարյուր հազար) դրամով:
   3) Բյուջեի ծախսային մասում՝բաժին 11 խումբ 1 դաս 2 4891 հոդվածը պակասեցնել 1052,7 (մեկ միլլիոն հիսուներկու հազար յոթ հարյուր) դրամով:
   4) Բյուջեի ծախսային մասում՝բաժին 10 խումբ 7 դաս 1 4729 հոդվածը ավելացնել 2352,7 (երկու միլլիոն երեք հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր) դրամով:
   5) Բյուջեի ծախսային մասում՝բաժին 06 խումբ 3 դաս 1 5113 հոդվածից 250,0 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ տեղափոխել նույն խումբ-ենթախմբի 5129 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10- րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Թ. Մխիթարյան _____

Հ. Համբարձումյան _____
Գ. Ղազարյան _____
Հ. Ղահրամանյան _____
Վ. Հունանյան _____
Գ. Գրիգորյան _____

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ _____ Ա. Մխիթարյան
2011 թվական նոյեմբերի 01
գ. Այգեշատ (Արմ.)